ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՏԿՆ-ԲՄԾՁԲ-2018/4ՏՀ-2

ք. Երևան **<<27>> նոյեմբերի 2018թ.**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Ս. Ամիրխանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Քարազարթ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Է. Ոսկանյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է S-5-25,Մ-3-Լեռնապատ ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի երաշխիքային ժամկետները ներկայացված են պայմանագրի N – Հավելվածում:

2.4.5 Եթե պայմանագրի 2.4.4 կետով սահմանված ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Կատարողը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության ընդհանուր գինը կազմում է 420 000 (չորս հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման

ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3 Կենտրոնական Գանձապետարան Հ/Հ 900011020733 ՀՎՀՀ 02565518	<< Քարազարթ >> ՍՊԸ ք. Սիսիան, Շիրանավանդ 5 Հ/Հ 0001434[illegible]
(կտրոնագրություն)	(կտրոնագրություն)
Կ.Տ.	

Հավելված N 1
« » նոյեմբերի 2018թ. կնքված
ՏԿՆ-ԲՄՇՁԲ-2018/4ՏՀ-2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	71351540/85	S-5-25, Մ-3-Լեռնապատ ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ	դրամ	420 000.0	1		համապատասխան շինարարական աշխատանքների կատարման ավարտը:

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

Չափաբաժին 2

S-5-25, Մ-3-Լեռնապատ ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն

Ծրագրի անվանումը	ՀՀ 2018թ. պետական բյուջեի պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում
Ֆինանսավորման աղբյուր	2018թ. ՀՀ պետական բյուջե
Պատվիրատու	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
Ծառայության անվանումը	S-5-25, Մ-3-Լեռնապատ ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն
Ճանապարհի անվանումը	S-5-25, Մ-3-Լեռնապատ
Հատված	Համաձայն նախագծի
Աշխատանքի տեսակը	Ըստ նախագծի
Ծառայության մատուցման ընդհանուր պահանջներ	• Իրականացնել ամենօրյա տեխնիկական հսկողություն՝ համաձայն քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանում բերված դրույթների՝ ապահովելով Ծառայությունը մատուցողի կողմից նշանակված տեխնիկական հսկիչի ամենօրյա ներկայությունը շինարարական օբյեկտում: Տվյալ շինարարական տեղամասում նշանակված տեխնիկական հսկիչի անհարգելի բացակայության դեպքում Ծառայություն մատուցողը պայմանագրով սահմանված կարգով կրում է

	պատասխանատվություն: • Հսկել շինարարական աշխատանքների ընթացքը, համապատասխանությունն ապահովելու նպատակով՝ աշխատանքային նախագծին, կապալի պայմանագրի դրույթներին և գործող շինարարական նորմերին • Հաստատել և հսկել աշխատանքների իրականացման ծրագիրը • Ստուգել և հսկել նյութերի որակը և շինարարական աշխատանքների ընթացքը: Արգելել կամ փոփոխել այն նյութերը, որոնք չեն համապատասխանում անհրաժեշտ պահանջներին • Գնահատել և հսկել շինարարական աշխատանքների ընթացքը, որպեսզի ապահովվի շինարարական աշխատանքների ավարտը՝ համաձայն պայմանագրի մեջ նշված ժամանակացույցի • Ստուգել բոլոր այն լաբորատոր փորձարկումների արդյունքները, որոնք անհրաժեշտ են որակի ապահովման համար • Ստուգել բոլոր փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են համապատասխան վճարումները իրականացնելու համար • Կատարել որակի և կատարված ծավալի ամենօրյա հսկում: Հաստատել վճարման հավաստագրերը, եթե աշխատանքները կատարվել են անհրաժեշտ որակով և ծավալով • Կապալառուին պարզաբանել նախագծային փաստաթղթերի հետ կապված հարցերը: Անհրաժեշտության դեպքում առաջարկել աշխատանքային ժամանակացույցի մեջ կատարել փոփոխություններ կամ առաջարկել կատարել լրացուցիչ վճարումներ (երկու դեպքում էլ անհրաժեշտ է Պատվիրատուի համաձայնությունը) • Իրականացնել հսկողություն աշխատանքային տեղամասերում շինարարական աշխատանքների անվտանգությունը ապահովելու նպատակով: Հրահանգել կապալառուին ապահովել աշխատանքային տեղամասերում անհրաժեշտ նշանների, լուսավորության, անվտանգության այլ միջոցների առկայությունը • Կատարել անհրաժեշտ օրական գրառումներ, որոնք անհրաժեշտ են պայմանագրի ընթացքի տեխնիկական հսկման համար (ընդգրկելով կատարված աշխատանքների օրական հավաստագրերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր) • Ստուգել և հաստատել կապալառուի կողմից նախապատրաստված կատարողական գծագրերը:
Հաշվետվության ներկայացման պահանջներ	• Կատարողը պարտավոր է ներկայացնել Պատվիրատուին Ծառայությունների վերաբերյալ ***<u>ընթացիկ և ավարտական հաշվետվություններ</u>***, որոնք հանդիսանում են Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունները հիմնավորող փաստաթղթեր: • ***<u>Ընթացիկ հաշվետվությունները</u>*** ներկայացվում են շինարարական աշխատանքների յուրաքանչյուր կատարողական ակտի ժամանակահատվածին համապատասխան, ընդգրկելով իրականացված ծառայությունները և կատարված աշխատանքները հավաստող ու հիմնավորող տեխնիկական փաստաթղթերի պատճենները (համառոտ նկարագրություն տվյալ ժամանակահատվածում իրականացված շինարարական աշխատանքների և տեխ.հսկողության ծառայությունների վերաբերյալ, տեղեկանք (Ձև 2), լաբորատոր փորձարկումների արդյունքներ, նյութերի, կոնստրուկցիաների որակի համապատասխանության հավաստագրեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների ընդունման ակտեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով), սխեմաներ, թույլտվություններ, և այլ անհրաժեշտ փաստաթղթեր): ***<u>Ավարտական հաշվետվությունը</u>*** պետք է ընդգրկի հետևյալ փաստաթղթերի պատճենները՝ ավարտական կատարողական գծագրեր, ավարտական կատարողական ակտ, ամփոփ նկարագրական տեղեկանք իրականացված շինարարական աշխատանքների ամբողջ ժամանակահատվածի համար, ավարտված շինարարական օբյեկտի լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով)

	• ***Ընթացիկ հաշվետվությունները*** ներկայացվում են շինարարական աշխատանքների յուրաքանչյուր կատարողական ակտը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո երկօրյա ժամկետում՝ Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունների հետ մեկտեղ: • ***Ավարտական հաշվետվությունը*** ներկայացվում է շինարարական աշխատանքների ավարտական կատարողական ակտը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո երկօրյա ժամկետում:
Նորմատիվային պահանջներ	Տեխնիկական հսկողության ծառայությունները իրականացնել համաձայն՝ • ՀՀ քաղաքաշինության մասին օրենքի • Քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանի • ՀՀ կառավարության թիվ N 526-Ն 04 մայիսի 2017թ. որոշման

Ծառայությունների մատուցման ժամկետը

սկիզբը	***ավարտը***
Համապատասխան շինարարական աշխատանքների կատարման սկիզբը	Համապատասխան շինարարական աշխատանքների կատարման ավարտը

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ

S-5-25, Մ-3-Լեռնապատ ավտոճանապարհի հիմնանորոգման ընդհանուր աշխատանքների

(Չափաբաժին 2)

NN	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ.	Ծավալ
1	**2**	**3**	**4**
	I Հողային աշխատանքներ		
1	*10ᵉ-IV կարգի բնահողի քանդում էքս. 0.65մ³ շ. փ. բարձում ա/ի տեղափոխում լցակույտ 2.0կմ միջին հեռ.*	*մ³*	*254.06*
2	*10ᵉ-IV կարգի բնահողի մշակում բուլդոզերով, տեղափոխում 50մ լիցքի իրականացման համար (հարթում, ջրում, խտացում)*	*մ³*	*36.35*
	II Երթևեկելի մաս		
1	*Ճանապարհային ծածկի քանդում $h_{միջ}$=16սմ էքս. 1մ³ շ.փ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 2 կմ*	*մ³*	44.5
2	*Ա/ճ ծածկի մշակում սառը վերօգտագործման եղանակով h=20սմ (ավելացված ցեմենտ խառնուրդի մասսայի 4% չափով) խճավազային լցանյութ $h_{միջ}$=7 սմ (18896.25 մ² տեղամասում)*	*մ³*	*89*
3	Սառը վերօգտագործման մակերևույթի վրա բիտումային էմուլսիայի տարածում 1լ/1մ²	*մ³*	*58.1*
4	*Ա/բ ծածկի վրա ապամի կտրում 5 սմ խորությամբ*	*մ²*	*6*
5	*Մանրահատիկ ա/բ h=5սմ (ներառյալ 6 մ² ապամ)*	*մ²*	*24935.84*
6	*Մանրահատիկ ա/բ h=4սմ*	*մ²*	*524*
7	*Հարթեցնող շերտի իրականացում $h_{միջ}$=3սմ*	*տ*	*90.92*
8	*Խճային հիմք h=12 սմ բիտումի տարածումով 4.12տ/1000մ²*	*մ²*	*1353.59*

9	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ²	1561.61
10	Ե/բ 6x2x0.14 մ սալերի տեղադրում (գյուղ. տեխնիկայի համար)	հատ	6.0
11	Ավազակոպճային շերտի տեղադրում h=7սմ (սալերի տակ)	մ²	72
	III Կողնակներ և կողային առուներ		
1	Կողնակներում կուտակված 10eIV բնահողի մաքրում էքս. 0.65մ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 2 կմ	մ³	250
2	Կողնակներում կուտակված 10eIV բնահողի մաքրում ձեռքով բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 2 կմ	մ³	54.21
3	Կողնակների հարթում գրեյդերով	մ²	8325
4	Կողնակների լրացում h=5սմ ավազակոպճային բնահողով (6eIII - 2 կմ)	մ²	8325
5	Կողնակների լիցք h=12 սմ ավազակոպճային բնահողով (6eIII - 2 կմ)	մ²	165
6	Կողային առուների մաքրում	գծմ	1653
	IV. Իջատեղեր		
1	Հողային պաստառի հարթում բուլդոզերով (10eIV)	մ²	1166
2	Քայքայված ա/բ ծածկի $h_{միջ}$=16 սմ քանդում էքս. 0.65մ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 2 կմ	մ³	20
3	Խողովակների փոսորակների 10eIV բնահողի քանդում էքս. 0,65մ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 2կմ	մ³	3.82
4	10eIV բնահողի քանդում ձեռքով, կողքի կուտակում	մ³	3
5	d=325 մմ խողովակի տեղադրում ("=5մմ)	գծմ	31
6	Միաձույլ բետոնե գլխամասեր B-20 - մետ. d=325մմ խողովակ	մ³	1.048
7	Գլխամասերի ջրամեկուսացում - մետ. d=325մմ խողովակ	մ²	8.56
8	Մետ. d=325 մմ խողովակի ջրամեկուսացում	գծմ	28.6
9	Ավազակոպճային շերտ h=10սմ - մետ. d=325մմ խողովակ	մ³	1.24
10	Հետադարձ լիցք	մ³	3
11	Խճային հիմք $h_{միջ}$=12սմ բիտումի տարածումով 4.12տ/1000մ²	մ²	1151
12	Մանրահատիկ ա/բ h=4սմ	մ²	1226
	V. Բետոնյա վաքեր և եզրաքարեր		
1	10eIV բնահողի քանդում էքս. 0,65մ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 2կմ	մ³	15
2	10eIV բնահողի քանդում ձեռքով բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 2կմ	մ³	3.75
3	30x34սմ վաքերի տեղադրում	մ³	6.0
4	Վաքերի ջրամեկուսացում	մ²	94.5
5	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ³	3.75
6	Անվտանգության նպատակով բետոնյա 15x30սմ եզրաքարերի տեղադրում	գծմ	120
	VI. Ջրընդունիչ և մետ. ցանց L=(20+20+10) մ		
1	Փոսորակի փորում 10eIV կարգի բնահողում էքս.0,65մ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 2կմ	մ³	38.0
2	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ³	4.7

3	Միաձույլ ե/բ ջրընդունիչ վաք (բետոն B-20) ամրան . 14մմ A500c - 500.11 կգ:	մ³	17.4
4	Ցանցի իրականացում ամրան . 25մմ A500c - L=288 մ, P=1109.66 կգ Անկյունակ L 100x10մմ - L=100 մ, P= 1510.0 կգ Անկյունակ L 90x9մմ - L=152 մ, P=1854.4 կգ	կգ	4474.06
5	Քսվածքային ջրամեկուսացում	մ²	60.0
6	Հետլիցք ձեռքով	մ³	8.0
7	*Ավելացած գրունտի բարձում ա/ի էքս. 0.65 մ³ շ.տ. տեղափոխում լցակույտ 2 կմ հեռ. վրա:*	մ³	*30.0*
	VII Արգելափակոցներ		
1	*Մետաղական արգելափակոցների տեղադրում*	*գծմ*	*423*
2	*Ուղղորդ սյուների տեղադրում*	*հատ*	*6*
	VIII Նշագծում		
1	*Նշագծման ընդհանուր մակերեսը.այդ թվում՝*	*մ²*	*204.7*
	IX Նշաններ		
1	*Նոր ճան. նշանների տեղադրում, այդ թվում՝*	*հատ*	*52*
2	*Ճան. նշանների ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը*	*հատ*	*6*
	X Չգործող խողովակաշարի ապամոնտաժում		
1	*Հողային աշխատանքների իրականացում 10eIV կարգի բնահողում էքս. 0.65մ³ շ.տ. կողքի կուտակում*	*մ³*	*18.41*
2	*Չգործող մետ. d=159մմ խողովակաշարի ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը*	*գծմ*	*160*
3	*Հետադարձ լիցք բուլդոզերով (հարթում, ջրում, խտացում)*	*մ³*	*18.41*
4	*Կողնակներում կուտակված 10eIV կարգի բնահողից հետադարձ լիցքի իրականացում ձեռքով*	*մ³*	*0.79*
	XI D530 Մետաղական խողովակի երկարացում		
1	Գոյություն ունեցող d530 մմ խողովակի ապամոնտաժում հետագա օգտագործման համար:	գմ	8.0
2	Խողովակի մաքրում բնահողից (6aII) բարձում ա/ի էքս 0.65 շտ և տեղափոխում տեղափոխում լցակույտ 2կմ հեռ վրա:	մ³	1.6
3	Հող. Աշխատանքներ (10eIV) խողովակի փոսորակների փորման համար էքս.0.65 մ³ շ.տ. կողքի կուտակումով հետլիցքի համար:	մ³	26.12
4	Նույնը՝ ձեռքով:	մ³	2.9
5	Ավազակոպճային նախապ. h=10սմ:	մ³	0.15
6	Խճային հիմք h=20սմ	մ³	5.97
7	Գլխամասի կառուցում միաձույլ բետոնից B20 F100 - հիմքեր - 1.15 մ³ - իրաններ - 1.47 մ³	մ³	2.62
8	Մետաղական dարտ=530մմ խողովակի տեղադրում 1գծմ=90,29կգ, պատի հաստ. 7մմ	գծմ	7
9	Պահեստավորված մետաղական dարտ=530մմ խողովակի տեղադրում:	գծմ	8.0
10	Որմնակապային ամրաններ Ø16 A500c l=45սմ	կգ	4.26
11	Խողովակի քսվածքային ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով	գծմ	14.2

12	Բետոնի քսվածքային ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով	մ²	9.88
13	Հետադարձ լիցք (10eIV) բուլդոզերով	մ³	15.3
14	Հետադարձ լիցք (10eIV) ձեռքով	մ³	1.7
15	Ավելացած գրունտի բարձում ա/ի էքս. 0.65 մ3 շ.տ. տեղափոխում լցակույտ 2 կմ հեռ. վրա:	մ³	12.0
	XII D1020 մետաղական խողովակի կառուցում		
1	Հող. Աշխատանքներ (10eIV) թաց գրունտում խողովակի փոսորակների փորման համար էքս.0.65 մ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 2 կմ հեռ. վրա: Ջրահեռացումը 30մ³/ժամ պոմպով:	մ³	12.4
2	Հող. Աշխատանքներ (10eIV) գրունտում խողովակի փոսորակների փորման համար էքս.0.65 մ³ շ.տ. կողքի կուտակումով հետլիցքի համար:	մ³	55.2
3	Նույնը՝ ձեռքով:	մ³	7.5
4	Ավազակոպճային նախապ. h=10սմ:	մ³	0.98
5	Խճային հիմք h=20սմ	մ³	13.5
6	Գլխամասի կառուցում միաձույլ բետոնից B20 F100 - հիմքեր - 5.25 մ³ - իրաններ - 5.0 մ³	մ³	10.25
7	Մետաղական ժարտ=1020 մմ խողովակի տեղադրում 1գծմ=249.08կգ, պատի հաստ. 10մմ	գծմ	17
8	Որմնակապային ամրաններ Ø18 A500c l=45սմ	կգ	7.2
9	Խողովակի քսվածքային ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով	գծմ	15.5
10	Գրունտի հետ շփման տեղամասերում բետոնների քսվածքային ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով:	մ²	18.5
11	Վաքի և հենակային ատամի միաձույլ բետոն B20 դասի միաձույլ բետոնով:	մ³	1.26
12	Հետադարձ լիցք (10eIV) բուլդոզերով	մ³	31.7
13	Հետադարձ լիցք (10eIV) ձեռքով	մ³	3.5
14	Ավելացած գրունտի բարձում ա/ի էքս. 0.65 մ³ շ.տ. տեղափոխում լցակույտ 2 կմ հեռ. վրա:	մ³	27.5
	XIII Կամրջի նորոգում (սխեման 1x15.0, երկարությունը 30մ, բարձրությունը 7.0մ, գաբարիտը Г-9.3մ)		
1	Կցորդման պարապետների բետոնե թասակի կազմատում ձեռքով բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 2 կմ հեռ. վրա:	մ³	1
2	Կլոր խողովակներից բազրիքների ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը:	տ	0.177
3	Պարապետների իրականացման տեղամասերում և երթևեկային մասում 10e IV գրունտի կազմատում էքս. 0.5 մ³ շտ և տեղափոխում լցակույտ 2 կմ հեռ. վրա:	մ³	86.2
4	Կամրջի տեղամասում բազրիքատակ քայքայված բետոնի կազմատում ձեռքով և տեղափոխում լցակույտ 2 կմ հեռ. վրա:	մ³	2
5	Ձախ կցորդման պարապետների վրա անցքերի գայլիկոնում խարիսխային ձողեր տեղադրելու համար d20, L_1=25 սմ, ուղղահայաց, քայլը 1 մ: Խարսխային ձողերի տեղադրում .18A500c -L_1=50սմ, P=14 կգ:	հատ	14
6	Ձախ կցորդման պարապետների աճեցում B20դասի միաձույլ բետոնով:	մ³	1.9
7	Պարապետների իրականացում B20դասի միաձույլ բետոնով կամրջի	մ³	15.6

	կենտրոնական մասերում և աջ կցորդումներում L=46 մ:		
8	Պարապետների երեսապատում բազալտե սրբատաշ քարերով b=3 սմ:	մ²	91.2
9	Բազալտե թասակների իրականացում սրբատաշ բազալտից h=5սմ, b=50 սմ, L=60 մ:	մ²	30.0
10	Երթևեկային մասից ջրահեռացման համար խողովակների տեղադրում .102 մմ, "=2 մմ L_1=50 սմ:	գմ	3.0
11	Աջ կողմում ենթաթեքության բետոնի իրականացում B20 դասի միաձույլ բետոնով $h_{միջ}$=17 սմ:	մ³	0.84
12	N1 հենարանի բազալտե քրքատաշ քարային շարվածքի վերականգնում b=12 սմ:	մ²	0.56
13	Նույն տեղամասում քարերի հետևի բետոնի լրալցում - B20:	մ³	0.16
14	N1 հենարանի մուտքի կողմից հակադարձ պատի խամքարե քարային շարվածքի վերականգնում b=40 սմ:	մ²	0.92
15	N1 հենարանի քարային շարվածքի կարերի լրալցում ցեմ. շաղախով, b=3 սմ:	մ²	2.16
16	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ²	279.0
17	Խիճ h=16սմ բիտումի տարածումով 4,12/1000մ²	մ²	279.0
18	Մանրահատիկ ա/բ ծածկ h=5սմ	մ²	279.0
	** միավորի արժեքը ներառում է շահույթը և Ա.Ա.Հ.*		

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

S-5-25, Մ-3-Լեռնապատ ավտոճանապարհի 2018 թ-ին իրականացվելիք հիմնանորոգման աշխատանքների

N N	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ	Ծավալ
1	2	3	4
	I Հողային աշխատանքներ		
1	*10ᵉ-IV կարգի բնահողի քանդում էքս. 0.65մ³ շ. փ. բարձում ա/ի տեղափոխում լցակույտ 2.0կմ միջին հեռ.*	*մ³*	*254.06*
2	*10ᵉ-IV կարգի բնահողի մշակում բուլդոզերով, տեղափոխում 50մ լիցքի իրականացման համար (հարթում, ջրում, խտացում)*	*մ³*	*36.35*
	II Երթևեկելի մաս		
1	*Ճանապարհային ծածկի քանդում $h_{միջ}$=16սմ էքս. 1մ³ շ.փ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 2 կմ*	*մ³*	*11.52*

2	*Ա/ճ ծածկի մշակում սառը վերօգտագործման եղանակով h=20սմ (ավելացված ցեմենտ խառնուրդի մասսայի 4% չափով) խճավազային լցանյութ $h_{միջ}$=7 սմ (18896.25 մ² տեղամասում)*	*մ²*	*8896.25*
3	Սառը վերօգտագործման մակերևույթի վրա բիտումային էմուլսիայի տարածում 1լ/1մ²	մ²	*8896.25*
4	*Ա/բ ծածկի վրա ափամի կտրում 5 սմ խորությամբ*	մ²	*6*
5	*Մանրահատիկ ա/բ h=5սմ (ներառյալ 6 մ² ափամ)*	*մ²*	*10255.84*
6	*Մանրահատիկ ա/բ h=4սմ*	*մ²*	*524*
7	*Հարթեցնող շերտի իրականացում $h_{միջ}$=3սմ*	*տ*	*90.92*
	III Կողնակներ և կողային առուներ		
1	*Կողնակներում կուտակված 10eIV բնահողի մաքրում էքս. 0.65մ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 2 կմ*	*մ³*	*250*
2	*Կողնակներում կուտակված 10eIV բնահողի մաքրում ձեռքով բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 2 կմ*	*մ³*	*54.21*
3	*Կողնակների հարթում գրեյդերով*	*մ²*	*8325*
4	*Կողնակների լրացում h=5սմ ավազակոպճային բնահողով (6eIII - 2 կմ)*	*մ²*	*4760.55*
	V. Բետոնյա վաքեր և եզրաքարեր		
1	10eIV բնահողի քանդում էքս. 0,65մ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 2կմ	մ³	15
2	10eIV բնահողի քանդում ձեռքով բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 2կմ	մ³	3.75
3	30x34սմ վաքերի տեղադրում	մ³	6.0
4	Վաքերի ջրամեկուսացում	մ²	94.5
5	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ³	3.75
6	Անվտանգության նպատակով բետոնյա 15x30սմ եզրաքարերի տեղադրում	գծմ	120
	VI. Ջրընդունիչ և մետ. ցանց L=(20+20+10) մ		
1	Փոսորակի փորում 10eIV կարգի բնահողում էքս.0,65մ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 2կմ	մ³	38.0
2	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ³	4.7
3	Միաձույլ ե/բ ջրընդունիչ վաք (բետոն B-20) ամրան . 14մմ A500c - 500.11 կգ:	մ³	17.4
4	Ցանցի իրականացում ամրան . 25մմ A500c - L=288 մ, P=1109.66 կգ Անկյունակ L 100x10մմ - L=100 մ, P= 1510.0 կգ Անկյունակ L 90x9մմ - L=152 մ, P=1854.4 կգ	կգ	4474.06
5	Քսվածքային ջրամեկուսացում	մ²	60.0
6	Հետլիցք ձեռքով	մ³	8.0
7	*Ավելացած գրունտի բարձում ա/ի էքս. 0.65 մ³ շ.տ. տեղափոխում լցակույտ 2 կմ հետ. վրա:*	*մ3*	*30.0*
	X Չգործող խողովակաշարի ապամոնտաժում		
1	*Հողային աշխատանքների իրականացում 10eIV կարգի բնահողում էքս. 0.65մ³ շ.տ. կողքի կուտակում*	*մ³*	*18.41*
2	*Չգործող մետ. d=159մմ խողովակաշարի ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը*	*գծմ*	*160*

3	*Հետադարձ լիցք բուլդոզերով (հարթում, ջրում, խտացում)*	*մ³*	*18.41*
4	*Կողնակներում կուտակված 10eIV կարգի բնահողից հետադարձ լիցքի իրականացում ձեռքով*	*մ³*	*0.79*
	XI D530 Մետաղական խողովակի երկարացում		
1	Գոյություն ունեցող d530 մմ խողովակի ապամոնտաժում հետագա օգտագործման համար:	գմ	8.0
2	Խողովակի մաքրում բնահողից (6aII) բարձում ա/ի էքս 0.65 շտ և տեղափոխում տեղափոխում լցակույտ 2կմ հեռ վրա:	մ³	1.6
3	Հող. Աշխատանքներ (10eIV) խողովակի փոսորակների փորման համար էքս.0.65 մ³ շ.տ. կողքի կուտակումով հետլիցքի համար:	մ³	26.12
4	Նույնը՝ ձեռքով:	մ³	2.9
5	Ավազակոպճային նախապ. h=10սմ:	մ³	0.15
6	Խճային հիմք h=20սմ	մ³	5.97
7	Գլխամասի կառուցում միաձույլ բետոնից B20 F100 - հիմքեր - 1.15 մ³ - իրաններ - 1.47 մ³	մ³	2.62
8	Մետաղական ժարտ=530մմ խողովակի տեղադրում 1գծմ=90,29կգ, պատի հաստ. 7մմ	գծմ	7
9	Պահեստավորված մետաղական ժարտ=530մմ խողովակի տեղադրում:	գծմ	8.0
10	Որմնակապային ամրաններ Ø16 A500c l=45սմ	կգ	4.26
11	Խողովակի քսվածքային ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով	գծմ	14.2
12	Բետոնի քսվածքային ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով	մ²	9.88
13	Հետադարձ լիցք (10eIV) բուլդոզերով	մ³	15.3
14	Հետադարձ լիցք (10eIV) ձեռքով	մ³	1.7
15	Ավելացած գրունտի բարձում ա/ի էքս. 0.65 մ3 շ.տ. տեղափոխում լցակույտ 2 կմ հեռ. վրա:	մ³	12.0
	XII D1020 մետաղական խողովակի կառուցում		
1	Հող. Աշխատանքներ (10eIV) թաց գրունտում խողովակի փոսորակների փորման համար էքս.0.65 մ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 2 կմ հեռ. վրա: Ջրահեռացումը 30մ³/ժամ պոմպով:	մ³	12.4
2	Հող. Աշխատանքներ (10eIV) գրունտում խողովակի փոսորակների փորման համար էքս.0.65 մ³ շ.տ. կողքի կուտակումով հետլիցքի համար:	մ³	55.2
3	Նույնը՝ ձեռքով:	մ³	7.5
4	Ավազակոպճային նախապ. h=10սմ:	մ³	0.98
5	Խճային հիմք h=20սմ	մ³	13.5
6	Գլխամասի կառուցում միաձույլ բետոնից B20 F100 - հիմքեր - 5.25 մ³ - իրաններ - 5.0 մ³	մ³	10.25
7	Մետաղական ժարտ=1020 մմ խողովակի տեղադրում 1գծմ=249.08կգ, պատի հաստ. 10մմ	գծմ	17
8	Որմնակապային ամրաններ Ø18 A500c l=45սմ	կգ	7.2

9	Խողովակի քսվածքային ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով	գծմ	15.5
10	Գրունտի հետ շփման տեղամասերում բետոնների քսվածքային ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով:	մ²	18.5
11	Վաքի և հենակային ատամի միաձույլ բետոն B20 դասի միաձույլ բետոնով:	մ³	1.26
12	Հետադարձ լիցք (10eIV) բուլդոզերով	մ³	31.7
13	Հետադարձ լիցք (10eIV) ձեռքով	մ³	3.5
14	Ավելացած գրունտի բարձում ա/ի էքս. 0.65 մ³ շ.տ. տեղափոխում լցակույտ 2 կմ հեռ. վրա:	մ³	27.5
	XIII Կամրջի նորոգում (սխեման 1x15.0, երկարությունը 30մ, բարձրությունը 7.0մ, գաբարիտը Г-9.3մ)		
1	Կցորդման պարապետների բետոնե թասակի կազմատում ձեռքով բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 2 կմ հեռ. վրա:	մ³	1
2	Կլոր խողովակներից բազրիքների ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը:	տ	0.177
3	Պարապետների իրականացման տեղամասերում և երթևեկային մասում 10e IV գրունտի կազմատում էքս. 0.5 մ³ շտ և տեղափոխում լցակույտ 2 կմ հեռ. վրա:	մ³	86.2
4	Կամրջի տեղամասում բազրիքատակ քայքայված բետոնի կազմատում ձեռքով և տեղափոխում լցակույտ 2 կմ հեռ. վրա:	մ³	2
5	Ձախ կցորդման պարապետների վրա անցքերի գայլիկոնում խարիսխային ձողեր տեղադրելու համար d20, L_1=25 սմ, ուղղահայաց, քայլը 1 մ: Խարսխային ձողերի տեղադրում .18A500c -L_1=50սմ, P=14 կգ:	հատ	14
6	Ձախ կցորդման պարապետների աճեցում B20դասի միաձույլ բետոնով:	մ³	1.9
7	Պարապետների իրականացում B20դասի միաձույլ բետոնով կամրջի կենտրոնական մասերում և աջ կցորդումներում L=46 մ:	մ³	15.6
8	Պարապետների երեսապատում բազալտե սրբատաշ քարերով b=3 սմ:	մ²	91.2
9	Բազալտե թասակների իրականացում սրբատաշ բազալտից h=5սմ, b=50 սմ, L=60 մ:	մ²	30.0
10	Երթևեկային մասից ջրահեռացման համար խողովակների տեղադրում .102 մմ, "=2 մմ L_1=50 սմ:	գմ	3.0
11	Աջ կողմում ենթաթեքության բետոնի իրականացում B20 դասի միաձույլ բետոնով $h_{միջ}$=17 սմ:	մ³	0.84
12	N1 հենարանի բազալտե քրքատաշ քարային շարվածքի վերականգնում b=12 սմ:	մ²	0.56
13	Նույն տեղամասում քարերի հետևի բետոնի լրալցում - B20:	մ³	0.16
14	N1 հենարանի մուտքի կողմից հակադարձ պատի խամքարե քարային շարվածքի վերականգնում b=40 սմ:	մ²	0.92
15	N1 հենարանի քարային շարվածքի կարերի լրալցում ցեմ. շաղախով, b=3 սմ:	մ²	2.16

16	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ²	279.0
17	Խիճ h=16սմ բիտումի տարածումով 4,12/1000մ²	մ²	279.0
18	Մանրահատիկ ա/բ ծածկ h=5սմ	մ²	279.0

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական
տեխնոլոգիաների նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011020733
ՀՎՀՀ 02565518

(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

ՍՊԸ
Գ. Երևան, Գրիգոր Լուսավորչի 5
ՀՎՀՀ 01811433
Հ/Հ 1930035723620100

(ստորագրություն)

Հավելված N 2
« » նոյեմբերի 2018թ. կնքված
ՏԿՆ-ԲՄԾՁԲ-2018/4ՏՀ-2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71351540/85	S-5-25, Մ-3-Լեռնապատ ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ										-	178 000.0	178 000.0	178 000.0

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական
տեխնոլոգիաների նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3
Կենտրոնական Գանձապետարան
ՀՎՀՀ 900011020733
ՀԿՀՀ 02565518

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<< Քարտագրող >> ՍՊԸ
ք. Սեբաստիայի փողոց 5
<<ԿՈՄԵՏԱԿ>>
ՀՎՀՀ 19300547238[illegible]
ԿՀՀ 02811433

(ստորագրություն)

Հավելված 3
« » նոյեմբերի 2018 թ. կնքված
ՏԿՆ-ԲՄԾՁԲ-2018/4ՏՀ-2 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » նոյեմբերի 2018 թ. կնքված
ՏԿՆ-ԲՄԾՁԲ-2018/4ՏՀ-2 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 9
ՏԿՆ-ԲՄԾՁԲ-2018/4ՏՀ-2 ծածկագրով
հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան « 27 » նոյեմբերի 2018 թ.

«Քարազարթ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Է.Ոսկանյանի, անձնագիր AK0417895 տրվ 12.01.2010թ ՕՕՕ-ի կողմից
Ընկերության անվանումը Ընկերության տնօրենի անուն ազգանունը, անձնագրային տվյալները

որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ՏԿՆ-ԲՄԾՁԲ-2018/4ՏՀ-2 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի /այսուհետ՝ Պահանջագիր/ ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև /__/____/20__ ** (Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան, իսկ պայմանագրով երաշխիքային ժամկետ սահմանված լինելու դեպքում՝ երաշխիքային ժամկետի ավարտին հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ):

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

« Քարազարթ » ՍՊԸ
ընկերության անվանումը

ք. Սիսիան, Շիրվանզադե 5
ընկերության հասցեն

<<ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ>> ՓԲԸ
ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

1930057723820100
ընկերության բանկային հաշվեհամարը

09811433
ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

Էդմոնդ Ոսկանյան
ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ

27/11/2018

*** լրացվում է մասնակցի կողմից*

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*
*** լրացվում է մասնակցի կողմից*

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ**

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ «Քարազարթ» ՍՊԸ

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Կոնվերս բանկ ՓԲԸ

6. Վճարողի հաշվի համարը՝ 1930057723820100

7. Վճարողի ՀՎՀՀ՝ 09811433

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ 02565518

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Կենտրոնական գանձապետարան

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900005000758

14.Գումարը (թվերով և բառերով)՝ 42 000 /քառասուներկու հազար/

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ AMD

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի կատարման ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝ ՏԿՆ-ԲՄԾՁԲ-2018/4ՏՀ-2

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.S.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ 21.բ. Կ.S.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.S. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.S. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.